

## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մի քանի փոխընթացման հուշագրեր և համաձայնագրեր են ստորագրվել ՀՀ առողջապահության նախարարության և ԻԻՀ առողջապահության և բժշկական կրթության նախարարությունների միջև՝ առողջապահության տարբեր ոլորտներում համագործակցության շուրջ.

1. Ստորագրվել է 1995թ. մայիսի 6-ին՝ Թեհրանում,
2. Ստորագրվել է 1995թ. հոկտեմբերի 31-ին՝ Երևանում,
3. Ստորագրվել է 1996թ. հունվարի 21-ին՝ Թեհրանում,
4. Ստորագրվել է 1996թ. ապրիլի 23-ին՝ Երևանում:
5. Ստորագրվել է 2005թ. ապրիլի 19-ին՝ Երևանում:
6. Ստորագրվել է 2015թ. դեկտեմբերի 14-ին՝ Թեհրանում:

Համագործակցության շրջանակները ներառում են.

- փոխադարձ համաձայնությամբ դեղերին և բժշկական սարքավորումներին, առնչվող կարիքների մասին փոխտեղեկատվության տրամադրում, ինչպես նաև իրենց երկրների համապատասխան ընկերությունների՝ բժշկական արտադրանքին առնճվող գործառույթներին փոխադարձ աջակցություն,
- դեղերի գրանցման գործընթացի համար պայմանների ապահովում՝ Կողմերի պետություններում գործող օրենսդրության համաձայն,
- դեղերի, բժշկական սարքավորումների, կենսատեխնոլոգիական ապրանքների և պատվաստանյութերի համատեղ արտադրության համար պայմանների ապահովում՝ Կողմերի պետություններում գործող օրենսդրության համաձայն,
- առողջապահության և բժշկագիտության տարբեր ոլորտներում գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանակում,
- տեղեկատվության և փորձի փոխանակում հանրային համակարգի հզորացման, ընդհանուր առողջապահական ծածկույթի ապահովման նպատակով, երկու երկրների ընդհանուր սահմանի մերձավոր, ինչպես նաև երկու երկրների այլ տարածքներում առաջնային, երկրորդային և երրորդային մակարդակի բժշկական օգնության տրամադրման նպատակով,
- բարձրագույն բժշկական կրթության ավարտական փաստաթղթերի երկկողմ փոխճանաչում,
- Կողմերի միջև համաձայնեցված պայմաններով առողջապահության բնագավառի շարունակական զարգացման համար կրթական միջոցառումների ապահովում, համատեղ գիտական աշխատանքների ապահովում Կողմերի համար անհրաժեշտ և հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով,
- առողջապահության բնագավառի հայաստանցի մասնագետների և աշխատակազմի համար տարբեր ոլորտներում կարճաժամակետ վերապատրաստման դասընթացների ապահովում, մասնավորապես առողջության առաջնային պահպանման և դոկագործության ոլորտներում,
- կարողությունների զարգացում ու համագործակցություն՝ կլինիկական և դեղագործական հետազոտությունների բնագավառում,
- առողջապահական զբոսաշրջության տարբեր բնագավառներում համագործակցության զարգացման ներկա իրավիճակի և հնարավորությունների ուսումնասիրություն,
- պոլիկլինիկայի ստեղծում իրանական կողմից՝ օգտագործելով հայկական կողմից տրամադրված հարմարությունները
- վարակիչ՝ հատկապես տուբերկուլոզի և ոչ վարակիչ՝ հատկապես սիրտ-անոթային և շնչառական համակարգերի հիվանդությունների, ինչպես նաև քաղցկեղային հիվանդությունների ոլորտում համագործակցություն,

- համագործակցություն արտակարգ իրավիճակներում (համաճարակ, մարդկանց մեծ հոսք, երկրաշարժ և այլն) մարդկանց և տրանսպորտային միջոցների պետական սահմանի համապատասխան անցակետերով անարգել անցման կանոնակարգման նպատակով,
- կեղծ դեղերի տեղափոխման և իրացման ժամանակ կեղծված դեղերը թաքցնելու և քողարկելու համար կիրառվող միջոցների, ինչպես նաև դրանց բացահայտման մեթոդների և դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- համագործակցություն ռիսկի գործոնների և առողջ սննդի բնագավառներում,
- երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում՝ փոխադարձ համաձայնությամբ: